մայն փանդուռը եղած է երկրաշարժու-
թեան հեղհեղէ պատահելոյն ու շարու-
նակելոյն պատճառով, թէպէտ մերթ թեթև
և մերթ զգալի կերպիւ կը ցնցէ: Ուստի
քաղաքական իշխանութեան կողմանէ տը-
նօրինուած է յիշատակեալ եկեղեցւոյ դըռ-
ները փակել և կնքել:

Առաջնորդարանը և Ուսումնարանն ևս
խախտուածքներէ զերծ մնացած չեն:

Հաւաստի տեղեկութենէ կիմանամք նաև,
թէ՝ Շամախիէն տասն և հինգ վերստ հե-
ռու գտնուած Թուրքաբնակ Մինղի գիւղը
իսպառ քայքայուած է:

Վեհ. Կաթուղիկոսը տեղեկանալով վե-
րոյիշեալ տագնապները և արկածները, փու-
թաց Հայրապետական Կոնդակով՝ սփոփել և
մխիթարել Շամախաբնակ իւր սիրեցեալ
որդւոց վշտացեալ և տագնապեալ սրտերը:
Նաև գոհութիւն Աստուծոյ, որ Շամախւոյ
բոլոր բնակիչքը նիւթական վնասէն 'ի բաց,
մարդոց կորուստներ ունեցած չեն:

---

Մեր Աթոռոյս մէջ սկսեալ շինու-
թեանց և վերանորոգութեանց 'ի նպաստ
նուիրատու Ազգայնոց անուանց ցուցակ-
ները այսուհետև կրկնութամբ հրատարակել
ամսագրոյս միջոցաւ:

Այս անգամ Պարսկաստանի Դաւրիժու
վիճակին մէջ՝ նորին Թեմակալ Առաջնորդ
Գերապատիւ Գրիգոր Յովսեփեանց Արքեպիս-
կոպոսի ձեռամբ հաւաքեալ նպաստից և
նուիրատուաց անուանց ցուցակը հասանե-
լով 'Նորին Վեհափառութեան, կը հրա-
տարակեմք սորա, թէև դեռ կը շարունակ-
վի ստորագրութիւնը յիշեալ վիճակին մէջ.
յետ այսորիկ ընդունելածներն ևս հեղհեղէ
շարունակել կը խոստանամք. նոյնպէս միւս
վիճակաց ցուցակներն, երբ ամբողջապէս
հասնին ժապաւինեալ տումարօքն 'ի Ս. Ա-
թոռս:

| Ի ԴԱՒՐԷԺ ՔԱՂԱՔԻ | Րուբլի | Կոպէկ |
|---|---|---|
| Մօսիօ Քասսապուայ Դաւզըեայի և Տիկին նորին Մեհրի խանում | 35 | |
| Աղա Արղումեան երկքին եղբարք Նազարբէկեանց . . . . . . . | 30 | |
| Պր. Կոստոյ Յարութիւնեան Տըփխիսեցի . . . . . . . . . . . | 20 | |
| Պր. Աստուածատուր Ղարաբէկեանց Դաւրիժեցի . . . . . . | 10 | |
| Սարգիս Տէր Օհաննեանց Ղարադաղցի 'ի Դաւրէժ բնակեալ . . | 5 | |
| Գասպար Շահնազարեան Ղարադաղցի 'ի Դաւրէժ բնակեալ . . | 3 | |
| Առի Միքայէլեան Պետրոսեանց Ղարադաղցի 'ի Դաւրէժ բնակեալ | 3 | |
| Ահարօն Զաքարեան Ագուլեցի | 2 | |
| Աղբար Ղազարոս Փիրումեանց Տփխիսեցի . . . . . . . . . . | 5 | |
| Նազար Մելիք-Մինասեանց Դաւրիժեցի . . . . . . . . . . . | 2 | |
| Յակոբ Խուտավերդեանց Դաւր. | 3 | |
| Զաքարիա Մելիք-Մնացականեան Ղարադաղցի 'ի Դ. բնակեալ . . | 2 | |
| Տիգրան Աղայ Ղարակօզեանց, Կոստանդնուպօլսեցի . . . . . | 15 | |
| Աբրահամ Յ. Վարդանեանց Ղարադաղցի, 'ի Դաւրէժ բնակեալ | 6 | |
| Մահտեսի Յարութիւն Թումանեանց Ղարադաղցի . . . . . . | 3 | |
| Յովհաննէս Նազարեանց Ղարադաղցի 'ի Դաւրէժ բնակեալ . . | 3 | |
| Թադդէոս Թամիրեանց Շուշեցի | 10 | |
| Մինաս Օհաննեանց Շուշեցի. . | 5 | |
| Սիմօն Յովակիմեան Շուշեցի. . | 1 | |
| Աւետիս Խաչատրեան Շուշեցի . | 5 | |
| Կարապետ Փարսադանեան Շուշ. | 1 | |
| Թօմաս Ճալալեանց Պօլսեցի 'ի Դաւրէժ բնակեալ . . . . . . | 5 | |
| Մատթէոս Նազարեան Շուշեցի | 5 | |
| Յովհաննէս Քալանթարեանց Ագուլեցի . . . . . . . . . . . | 7 | |
| Դանիէլ Մ. Շահպասեան Դաւր. | 1 | |

| | | |
|---|---|---|
| Կարապետ Մէլք Զօհրապեանց Դաւրիժեցի . . . . . . . . . . | 1 | 5 |
| Խաչատուր Տէր Զաքարեանց Ղ.արադաղցի 'ի Դաւրէժ բնակեալ . | 3 | |
| Եսայի Մէլք-Պաղտասարեան Ղ.արադաղցի 'ի Դաւրէժ բնակեալ . | 1 | |
| Դաւիթ Եղիէսով Շուշեցի . . | — | 5 |
| Սողոմոն Բէժով Տփխիսեցի . . | 5 | |
| Եգոր Զօհրապեանց Տփխիսեցի | 1 | |
| Ստեփան Կերոբեանց Ղ.արադաղցի 'ի Դաւրէժ բնակեալ . . . . | 1 | |
| Խանի Գալստեանց Ղ.արադաղցի 'ի Դաւրէժ բնակեալ . . . . . | 3 | |
| Ոսկեփիլ և Գաբրիէլ Յովսէփխանեան Դաւրիժեցի . . . . . | 10 | |
| Զաքարիա Սիմոնեան Դաւրիժեցի | 1 | |
| Մահտեսի Կարապետ Յովսէփեան Դաւրիժեցի . . . . . . . . . | — | 5 |
| Մահտեսի Աստուածատուր Ենոքեան Դաւրիժեցի . . . . . . . . | 1 | |
| Մկրտիչ Մովսիսեան Յեկրասանցի 'ի Դաւրէժ բնակեալ . . . . . | 1 | 5 |
| Եաքէլ Պօղոսեան Տէր Եաքէլեանց Դաւրիժեցի . . . . . . | 1 | |
| Արապիոն Ենոքեան Դաւրիժեցի | — | 5 |
| Յակոբ Մահտեսի Արիձոնեանց Դաւրիժեցի . . . . . . . . . | — | 7 |
| Ընդամէն | 32 | 2 |

Այս բոլոր գումարն առնէ վեց հարիւր տասն մանէթ թղթադրամ ռուսաց։

Գրիգոր Արքեպիսկոպոս Յովսէփեանց։

ի 10-ն Մարտի 1869 ամի

Ի ԴԱՒՐԷԺ։

---

## ՆՈՐԻՆ Վ.ԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

### ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԳ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ԳԷՈՐԳԱՅ ՉՈՐՐՈՐԴԻ

Ի Փոխանորդէ Թեմակալին Երևանայ

խոնարհաբար Յայտարարութիւն

Ըստ սնոյց պարտականութեանս իմ՝ համաձայն սովորութեան ընդ ամենայն սե-ղիս՝ 'ի սկզբան արձակուրդի կրկին սեռի Աշակերտաց Թեմական և ծխական Դպրոցաց Երևանայ, յաւարտ ձեռն 'ի գործ արկանելոյ հարցափորձութեան, նախ ծխական Դպրոցաց ապա 'ի 14-էն ամսոյս Հայ օրիորդաց Սուրբ Գայիանեան Դպրոցի անուանս, և ապա 'ի 15-էն նոյնոյ ամսոյ ցայս թիւ՝ միւս արական սեռի Աշակերտաց Դպրոցի քաղաքիս՝ հարկաւոր դատեցայ առաջի անել Ձերում Վ.եհափառութեան ըստ հետևելոցս 'ի տեղեկութիւն։

Ըստ կարգի աւուրց հատանելոյ խրախճանչէր միումն, հարցափորձեալ զեկեղեցական Դպրոցաց աշակերտան քաղաքիս կարգաւոր կերպիւ, նախ Քանաքեռ գեղջ, ապա Կոնդ մասին քաղաքիս, ապա Սուրբ Յովհաննու Եկեղեցւոյ, ապա Զօրաւոր Եկեղեցւոյ, հուսկ ապա Ս. Պետրոս և Պօղոս Եկեղեցւոյ՝ գտայ արդարև զյոյս յառաջադիմութեան 'ի սկզբունս առարկայից Հայոց լեզուի և Ռուսաց, արդարութեամբ յաջողութեանց նոցին Հոգաբարձուաց և Վ.արժապետաց, որք ըստ չափու կարողութեանց իւրեանց յիրաւի ջանան որ քան զօր արդասնորս առնել զընթացս կրթութեան աշակերտաց յիշեալ դպրոցաց։

Աշակերտուհի Օրիորդք, որք ամենեքեան ուսանին 'ի մի և նթ դասատան, 'ի հարցափորձութեան ոչ միայն 'ի Կրօնական առարկայն կարի յոյժ փայլեցուց հանդիսացան ընդ հայց և ընդ պատասխան 'ի սկզբանց հարկաւոր տեղեկութեանց կրօնագիտութեան՝ համաձայն կանոնաց Հայաստանեայց ուղղափառ սուրբ Եկեղեցւոյ. յաշխարհագրական տեղեկութեանց՝ լաւագոյն. յասղնագործութեան արհեստի գեղեցիկս. իսկ 'ի ընթերցանութիւնս Հայոց և Ռուսաց էս և 'ի թուաբանութեան՝ միջակ. յորայռի ամենայն առարկայն երևեալ 'ի շարունակելոց ամի նորիս՝ յուսամ հետ զհետէ յառաջ նկատել մեր Հայ աշակերտու-